ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն թիվ 1

Հայտերի բացման նիստի

Սպանդարյան ՀԷԿ-ի վերազինման ծավալների գնահատման ծառայությունների ձեռքբերման համար ստացված տեխնիկական հայտերի բացման նիստի

Գնման ծածկագիրը - **ՔԳՀԿ 13/26**
Գնման տեսակը - **բաց մրցույթ**
Գնումը ներառված է ՔԳՀԿ 2026-2028թթ. ներդրումային ծրագրում 6-րդ հավելվածում

2026թ. սեպտեմբերի 24-ին, Ժամը՝ 10:50-ին Ք. Գորիս, ՀՀ

Մասնակցում էին՝	
Հանձնաժողովի նախագահ՝	Արամ Յոլյան
Հանձնաժողովի անդամներ՝	Արամ Մելքումյան Կարեն Պետրոսյան Արթուր Մովսիսըան Սևակ Սուրենյան Անուշ Հարությունյան Արմինե Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան

1. Բաց մրցույթի գործընթացի կազմակերպման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել էր gnumner.am, itender.am, tender.am էլ. կայքերում և ContourGlobal-ի պաշտոնական կայքում 2026թ. հունիսի 24-ին: Մրցույթի համար մրցունակ առաջարկներ ապահովելու նպատակով հայտերի ներկայացման վերջնաժամկետը մեկ անգամ երկարաձգվել է և հայտերի հանձնման վերջնաժամկետը սահմանվել էր 2026թ. սեպտեմբերի 23-ին ժամը 17:00:

2. COUPA համակարգի միջոցով փակ ծրարներով հայտ էին ներկայացրել հետևյալ հինգ կազմակերպությունները՝
   - Voith Hydro GmbH & Co. KG, Ավստրիա,
   - Fichtner GmbH & Co. KG, Գերմանիա

- Համատեղ գործունեություն Gruner Stucky Ltd և Gruner Stucky Caucasus Ltd, Շվեյցարիա, Վրաստան
- Կոնսորցիում Novo–Spandaryan Consortium, բաղկացած չորս ֆիզիկական անձանցից և ղեկավարվում է իր գլխավոր անդամի և լիազորված ներկայացուցչի՝ պարոն Մանուել Նովոյի կողմից, Իսպանիա, Պանամա, Հնդկաստան, Պերու
- ANDRITZ HYDRO Ltd. Sti, Թուրքիա

3. Արման Պետրոսյանը նշեց, որ հայտերը բացվելու են Teams հեռահար զանգի ս.թ. սեպտեմբերի 24-ին ժամը 10:30: Coupa համակարգում առցանց բացվեցին հայտատուների կողմից ներկայացված Տեխնիկական առաջարկները: Իսկ ֆինանսական հայտերը Coupa համակարգում մնացին փակ: Ստացված տեխնիկական առաջարկները տրամադրվեցին գնահատող հանձնաժողովին՝ հայտերը մանրամասն տեխնիկական գնահատման նպատակով՝ որոշելու, թե արդյոք ներկայացված հայտերը համապատասխանում են մրցութային փաստաթղթերում նշված տեխնիկական և որակավորման պահանջներին: Նշվեց նաև, որ հայտերում բացակայող տեղեկատվության դեպքում, առաջարկել Հայտատուներին լրացնել այն կարճ ժամանակում:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների միաձայն համաձայնվեցին առաջարկներին:

Հանձնաժողովի անդամներ՝	Արամ Յոլյան	
	Արամ Մելքումյան	
	Կարեն Պետրոսյան	
	Սևակ Սուրենյան	
	Արթուր Մովսիսյան	
	Անուշ Հարությունյան	
	Արմինե Մանուկյան	
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան	